

ԱՄԿՈՎ Տեղեկագիր Հովիւի

-----

Սիրելի Միսկաններ,

Յաջող տարի մը բոլորած ըլլալու յոյսով է որ ծայր կուտամ իմ խօսքերուն: 1962 տարին մեզ համար եղաւ ողբան գործի նոյնքան նաեւ յառաջադիմու թեան, յաջողութեան եւ վերելքի շրջան մը: Նախ մեր բոլոր աշխատանքը կեդրոնացաւ բարձրացնելու Միւնիթեան ֆանտի գումարը 40.000-ի, հաւասարակշռելով նոյն ատեն Եկեղեցւոյ տասը հազարի հասնող պահէթը:

ՊԱՇՏԱՄՈՒՆՔ ԵՒ ՄԻՍԱԿԱՍՏԱՐՈՒԹԻՒՆՔ.- Բացի երկու Կիրակիներէ, բոլոր Կիրակիներուն կատարուած է Ս.Պատարագ; եւ խօսուած օրուան պատշաճ քարոզը: Ինչպէս կը նկատէք արդէն, Դպրաց Դասըս, շնորհիւ Տիար Ե.Սուրբան աշխատանքներուն արդէն իսկ 20 անդամներէն սակի կը հաշուէ իր մէջ: Եւ թերեւս պատճառներէն մին Փլ այդ է որ այս տարի նախորդին բաղձատմամբ 25 տոկոսով բարձրացած է Եկեղեցի հաճախողներու թիւը:

Ջորս Պսակներ, 9-ը մկրտութիւն տեղի ունեցած է Եկեղեցւոյ մէջ անցնող տարւոյս ընթացքին: Դժբաղդութիւնը ունեցանք վեց մահեր արձանագրելու մեր տոմարներուն մէջ:

ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ.- Կիրակնօրեայ Վարժարանը Տեսուչ Հրանդ Քիւրճեանի ղեկավարութեամբ լաւագոյնս կը շարունակէ իր գործը: Ջորս նոր ուսուցիչներ աւելցան կազմին վրայ: Հայկական Վարժարանը ինչպէս զիտէք տեղի կուսենաց Ուրբաթ երեկոներ 7-10.30: 16 աշակերտներ բաժնուած են երեք դասարաններու, որոնց տարիքը 20-էն վեր կը հաշուի: Հայերէնի դասերը կը մնան իմ ուսերուն, ունենալով իբր օգնական իմ քոյրս Տիկն.Պ.Գազանճեանը:

Աւելորդ պիտի զգամ հոս խօսիլ Տիկնանց Միութեան, Միական Խորհուրդի, Երիտասարդական կազմակերպութեան եւ այլոց գործնէութեան շուրջ, քանի որ պիտի լսէք անոնց ալ տեղեկագիրը: Միան սա ըսեմ որ բոլորին ալ ժողովներուն ներկայ եղած եմ առանց բացառութեան:

Ձեր բոլորին մաղթելով Առողջութիւն եւ յաջողութիւն, սակիով իրականացնելու մեր բոլորին ուսին դրուած պարտականութիւնները:

Հովիւ  
Գարեգին Մ.Վրդ. Գազանճեան